

ՊԱՇՏՈՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Հաշիվների և վարկերի հետգործառնական
սպասարկման բաժնի Առաջատար մասնագետ
Լրիվ դրույք

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

17/11/2022

09/12/2022

Անորոշ

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով պատասխանատու է լինելու ստորև նշված աշխատանքային պարտականությունները կատարելու համար.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Սոցիալական փաթեթի շրջանակներում սպասարկվող հաճախորդների փոխանցումների հետ կապված գրությունների տրամադրում հարցում կատարող կողմին,
- Բանկի աշխատակիցների և նրանց հետ փոխկապակցված անձանց հաշիվների հաշվեկշռային հաշիվների փոփոխում,
- Կառուցապատողների հաշիվների վարում,
- Բանկի մասնաճյուղերի կողմից կատարված սխալ գործարքների սրբագրումների և ուղղումների իրականացում,
- Հաճախորդների համար սահմանված արտոնյալ սակագների մուտքագրում,
- Բանկերի, հաճախորդների կողմից ուղարկված որոշ գրությունների, դիմումների պատասխանների պատրաստում, ուղարկում,
- Ավանդների երկարաձգում այն պայմանագրերի, որոնցում առկա է ավտոմատ երկարաձգման վերաբերյալ նշում բացառությամբ Համակարգում VIP նշում ունեցող հաճախորդների ավանդների,
- Հաճախորդների հաշիվներից միջնորդավճարների գանձում / հաշվետվությունների հիման վրա/,
- Փաստաբանների , սնանկության կառավարիչների կողմից կատարված հարցումների պատասխանների պատրաստում,
- Բանկին սեփականությանն անցած գույքերի վաճառքի արդյունքում հաճախորդների վարկային պարտավորությունների մարում, համապատասխան սրբագրումների իրականացում և գրավների դադարեցում Համակարգում,
- Վարկային պարտավորությունների զիջումների ձևակերպում,
- Բանկում գրավադրված ոսկու վաճառքից հետո համապատասխան պարտավորությունների մարման հետ կապված ձևակերպումների իրականացում, գրավների մարում, հաշվետվության ներկայացում վարկերի մարումների և մնացորդային գումարների վերաբերյալ,
- Դատարանի վճիռների հիման վրա Համակարգում համապատասխան ձևակերպումների իրականացում,
- Մահացած հաճախորդների վերաբերյալ տվյալների համապատասխան սրբագրումների իրականացում, հաշիվների սառեցում,
- Խնդրահարույց ակտիվների կառավարման գծով համապատասխան իրավասու մարմինների որոշումների հիման վրա ձևակերպումների իրականացում համակարգում,
- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնությունների իրականացում:

ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն տնտեսագիտական կրթություն
- 1 տարվա աշխատանքային փորձ
- Համակարգչային գիտելիքներ
- Լեզուների իմացություն
- Հաղորդակցման հմտություններ
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություն, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Մանրութների նկատմամբ ուշադրություն
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և Դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴԻ Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավորվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴԻ Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴԻ Բանկ» անվանումով: ԱյԴԻ Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը <https://www.idbank.am/>